ԷԴՈՒԱՐԴ ՓԱՇՈՅԻ
ԱՎԱԳՅԱՆ

Ծնվել է 1934թ., Շամշադինի (այժմ՝ Տավուշի) շրջանի Բերդ ավանում:

1951թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի թիվ 40 միջնակարգ դպրոցը և ընդունվել պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը:

1957թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ արդյունաբերական շինարարության նախարարությունում, ապա՝ Երևանի Լենինյան (այժմ՝ Շենգավիթի) շրջխորհրդի գործադիր կոմիտեում:

1960-1963 թվականներին պաշտոններ է վարել ՀԽՍՀ Պետշինում, պետական վերահսկողության կոմիտեում, աշխատել է Երևանի Օրջոնիկիձեի (այժմ՝ Էրեբունի) կուսշրջկոմի արդյունաբերության բաժնի վարիչ, ՀԿԿ կենտկոմի շինարարության բաժնի հրահանգիչ:

1967թ. Էդ. Ավագյանը ավարտել է ԽՄԿԿ կենտկոմին կից կուսակցական բարձրագույն դպրոցը և աշխատանքի նշանակվել ՀԿԿ կենտկոմում՝ որպես տեսուչ: Մեկ տարի անց ընտրվել է Օրջոնիկիձեի շրջխորհրդի գործկոմի նախագահ:

Եղել է ՀԽՍՀ նախարարների խորհրդի տնտեսական վարչության պետ, գյուղական շինարարության նախարարի տեղակալ (1971-1972), Սովետական շրջխորհրդի (այժմ՝ Նոր Նորք) գործկոմի նախագահ (1972-1974), Աբովյանի կուսշրջկոմի առաջին քարտուղար (1974-1979), ՀԽՍՀ արդյունաբերական շինարարության նախարար (1979-1985):

1985թ. Էդ. Ավագյանն ընտրվել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ և այդ պաշտոնում աշխատել մինչև 1989 թվականը:

1989-1990թթ. եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության գործերի կառավարիչը:

Եղել է մի շարք գումարումների ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Մահացել է 1991 թվականին: